ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2022

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի ուսուցիչ

Գիտելիքների ստուգման թեստը կազմված է 70 առաջադրանքներից, որոնց ընդհանուր միավորը հավասար է 70-ի: Դրանից ընտրովի առաջադրանքներին բաժին է ընկնում 40 առաջադրանք (40 միավոր), կարճերին՝ 24 առաջադրանք (24 միավոր) և կարճ-վանդակավորներին՝ 6 առաջադրանք (6 միավոր):

Թեստի կատարման համար հատկացվում է 180 րոպե:

Պատասխանների ձևաթղթում ընտրովի պատասխանով առաջադրանքներից (1-40) յուրաքանչյուրի համարի ներքևում տրված են 1-4 թվերով համարակալված վանդակներ: Ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը:

Կարճ պատասխանով առաջադրանքներում (41-64) հարցից կամ պահանջից հետո տրված են 7-ից մինչև 9 թվերով համարակալված պատասխաններ: Անհրաժեշտ է գտնել բոլոր ճիշտ պատասխանները կամ բոլոր սխալ պատասխանները: Ընդ որում՝ այս տիպի առաջադրանքները կարող են ունենալ 2, 3 կամ 4 ճիշտ պատասխան: Ճիշտ պատասխան համարվող թվերը (2, 3 կամ 4 ճիշտ պատասխաններինը) պետք է տեղադրել ձևաթղթի համապատասխան վանդակներում:

Կարճ-վանդակավոր առաջադրանքներին (65-70) պատասխանելիս անհրաժեշտ է ըստ հաջորդականության գրել ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը՝ նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ:

Մաղթում ենք Ձեզ հաջողություն

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 1-3-րդ հարցերին.

«Նա շատ մեծ անուն էր հանել, անարատ և արդար մարդ էր, շատ առաքինի, հռետորական գիտության քաջագիտակ, Աստծո Հին ու Նոր Կտակարաններին քաջատեղյակ և ամեն տեսակետից կարող էր օգտակար լինել Քրիստոսի հոտին: … Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող»:

1 Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

1) Թովմա Մեծոփեցի
2) Կիրակոս Գանձակեցի
3) Ստեփանոս Օրբելյան
4) Մատթեոս Ուռհայեցի

2 Ո՞ր կաթողիկոսի մասին է մեջբերված հատվածը.

1) Գրիգոր Բ Վկայասեր
2) Գրիգոր Գ Պահլավունի
3) Գրիգոր Դ Տղա
4) Ներսես Դ Շնորհալի

3 Ո՞ր թվականին է նա ընտրվել կաթողիկոս.

1) 1066 թ.
2) 1113 թ.
3) 1166 թ.
4) 1173 թ.

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 4-5-րդ հարցերին.

«Ով ճշմարտության մեջ է բնակվում, նա արդարն հաճո է Աստծուն, բոլոր մարդկանց համար օգտակար է և ամենայն գործի մեջ՝ շիտակ:

Ճշմարիտ մարդը չի հաճոյանում ուրիշներին, արդարադատ է, արժանիքներ և փառք ու պատիվ չի յուրացնում, չի քամահրում տնանկին և չքավորին, պատասխանների մեջ շողոքորթ չէ, դատողության մեջ ճշմարիտ է, գործի մեջ՝ ջանադիր, միաբանության մեջ միշտ բարեզարդ է, նենգություն չի ճանաչում, կեղծավորություն չի սիրում, զարդարված է բարի գործերով և ղեկավարվում է միայն առաքինությամբ... »:

4 Քրիստոնեական եկեղեցու տիեզերական վարդապետներից ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.

1) Կյուրեղ Երուսաղեմացի
2) Եփրեմ Ասորի
3) Բարսեղ Կեսարացի
4) Հովհան Ոսկեբերան

5 **Հեղինակի ո՞ր ստեղծագործությունից է մեջբերված հատվածը.**

1) «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ»
2) «Գիրք հաստատութեան և արմատ հավատոյ»
3) «Հոգևոր խրատներ»
4) «Գիրք հարցմանց»

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 6-8-րդ հարցերին.

«Այժմ բռնկված պատերազմն արևմտահայերի կյանքն ու ռեֆորմների ճակատագիրը նորից դնում է մեծ փորձության տակ:

....Բայց որպես իմ ժողովրդի հոգևոր հովիվ, ես չեմ կարող չտագնապել և Ձերդ պայծառափայլությանը չմատնանշել այն, որ Թուրքիայում հայ բնակչությունն ապրելու է խորապես վշտալի օրեր, եթե Ռուսաստանի ուշադրությունը Հայոց հարցի նկատմամբ ժամանակավորապես թուլանա...»:

6 **Ո՞ր պատերազմի մասին է խոսքը.**

1) Առաջին համաշխարհային
2) Ռուս-թուրքական 1877-1878 թթ.
3) Բալկանյան առաջին
4) Բալկանյան երկրորդ

7 **Ո՞ւմ է ուղղված մեջբերված խոսքը.**

1) Նիկոլայ II-ին
2) Վորոնցով-Դաշկովին
3) Ալեքսանդր II-ին
4) Լլոյդ Ջորջին

8 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

1) Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի
2) Գևորգ Ե Սուրենյանց
3) Ներսես Վարժապետյան
4) Մկրտիչ Ա Խրիմյան

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 9-10-րդ հարցերին.

«Լավ է՝ ես մեռնեմ, քան թե անարժան գործի համար հավատացյալներին մատնեմ անօրենների ձեռքը: Քանի որ [թագավորը] իր անձի վրա Քրիստոսի հոտի կնիքն է կրում»:

9 Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը.

1) Եղիշե
2) Փավստոս Բուզանդ
3) Ղազար Փարպեցի
4) Մովսես Խորենացի

10 Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.

1) Վռամշապուհ
2) Սահակ Պարթև
3) Մուշեղ Մամիկոնյան
4) Արշակ II

11 Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.

«Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի է գերազանցապես, իր հոտն ամբողջովին հայերից կազմված, իր լեզվով, գրականությամբ, արվեստով, ժամերգությամբ ու հոգևոր կյանքով, բնականաբար՝ նաև անցյալով և պատմությամբ շաղկապված հայ ժողովրդի հետ»:

1) Խրիմյան Հայրիկ
2) Մաղաքիա Օրմանյան
3) Գարեգին Ա Հովսեփյան
4) Գևորգ Ե Սուրենյանց

12 Ո՞վ է աղոթքից մեջբերված հատվածի հեղինակը.

« .... Հայցում ենք ամենախնամ և ամենագութ Արարչից, որպեսզի կտրվածը դարձյալ բժշկի և հոգու զրգանքով - իբրև թռչունը, որ ձագերին իր թևերի տակ է ժողովում, իր ամրածածուկ աջով վերստին հավաքելով հայերին նրանց վիճակված սեփական, բնիկ և հայրենի երկրի ու գավառների մեջ, վերանորոգի այնպես, ինչպես ստեղծել էր ամենասկզբում՝ պանծալի փառքով և բարգավաճող արդյունքով:

Ուժ տա, կազդուրի և հաստատահիմն դարձնի թագավորական ու հոգևոր ինքնիշխանությամբ և ամեն տեսակ բարիքներով»:

1) Ղազար Ա Ջահկեցի
2) Աղեքսանդր Ա Ջուղայեցի
3) Եղիազար Ա Այնթափեցի
4) Հակոբ Դ Ջուղայեցի

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 13-15-րդ հարցերին.

«Այն ժամանակ, երբ լրացավ մեր Տիրոջ մարմնանալու հազար տարին, Հայոց .... թագավորը բարի խորհուրդ հանձն առավ՝ կամեցավ Քաղաքաղաշտի սուրբ .... անունով կառուցված, բայց քանդված մեծաշեն եկեղեցին նույն ձևով ու չափով կերտել .... քաղաքում: Այն հիմնեց Ծաղկոցաձորի կողմում, բարձրավանդակ տեղում՝ տեսնողներին հիացնող մեծ սրբատաշ քարերով և նուրբ զարդաքանդակներով, լուսաբեր պատուհաններով, եռյակ դռներով, սքանչելատես գմբեթով, որ նման էր երկնքի գնդին»:

13 Ո՞ր եկեղեցու մասին է խոսքը.

1) Տիգրան Հոնենցի
2) Ս. Կաթողիկե
3) Ս. Առաքելոց
4) Ս. Գրիգոր Լուսավորիչ

14 Ո՞ր աշխատությունից է մեջբերումը.

1) «Հայոց պատմություն»
2) «Ազգապատում»
3) «Ժամանակագրություն»
4) «Տիեզերական պատմություն»

15 Ո՞վ է աշխատության հեղինակը.

1) Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ
2) Հովհաննես Դրասխանակերտցի
3) Մատթեոս Ուռհայեցի
4) Մաղաքիա Օրմանյան

Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել 16-17-րդ հարցերին.

«Այստեղ տեսնել էր պետք մեր ամբողջ ազգի ուրախությունն ու ցնծությունը. զանգակների փողն էր հնչում, երիտասարդները գոչում էին, ծերերն աղաղակում էին և ցնծությամբ օրհնում Աստծուն, մանուկները խայտում էին, կանայք երկրպագությամբ ու լալով բոլորին զարհուրանք էին պատճառում, իսկ անօրենները նայելով զարմանում էին: Եվ ինչպես Փրկչի՝ Երուսաղեմ սուրբ քաղաքը գալու օրը մեծ ուրախությամբ ընդառաջ եկան, նույնպես այսօր եղավ հայերիս համար…»:

16 Ի՞նչ իրադարձության մասին է խոսքը.

1) Հայոց կաթողիկոսական աթոռը Սսից Ս. Էջմիածին տեղափոխելու
2) Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ստեղծման
3) Համայն քրիստոնյաների Ս. Հարություն տաճարում իրադարձության
4) Սմբատ Արծրունուն Հայոց թագավոր օծելու

17 Ո՞ր աշխատությունից է մեջբերված հատվածը.

1) «Սուրբ Կաթողիկեի ողբը»
2) «Պատմություն Հայոց»
3) «Պատմություն»
4) «Հիշատակարան»

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 18-19-րդ հարցերին.

«Այսօր իմ բոլոր մտածումները, մաղթանքները և սպասումներն ուզում եմ արտահայտել մեկ ամփոփ բանաձևումով, որն ընդունված է մեր եկեղեցու կյանքում: Այդ է՝ «ազատություն յերկբայականս, միութիւն ի կարևորս և սեր յընդհանուրս»: .... միութիւն ի կարևորս: Սա էլ պատմական փորձառության արդյունք է, սիրելի եղբայրներ և քույրեր, որ միանանք հիմնական հարցերի մեջ, որոնք վճռական նշանակություն ունեն մեր ժողովրդի կյանքի ճանապարհը գծելու և ավելի լուսավոր ապագա գտնելու: Ուրեմն բախտորոշ հարցերում պետք է ստեղծվի այդ միությունը....»:

18 Ի՞նչ իրադարձության ժամանակ են ասվել այս խոսքերը.

1) «Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում
2) Հայաստանի նորընտիր խորհրդարանի բացման ժամանակ
3) Մեծի Տանն Կիլիկիո նորընտիր կաթողիկոս Արամ Ա-ի օծման ժամանակ
4) Հայաստանի անկախության հանրաքվեից հետո

19 Ո՞վ է ասել այս խոսքերը.

1) Գարեգին Ա
2) Գարեգին Բ
3) Վազգեն Ա
4) Արամ Ա

20 Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.

«Տունը և ընտանիքը մի փոքրիկ թագավորության երկիրն ու սահմանն են, որի նահապետական աթոռին նստում են ծնողները: Հայրն իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի կառավարում են ընտանիքը»:

1) Գևորգ Ե
2) Խաչատուր Աբովյան
3) Խրիմյան Հայրիկ
4) Լևոն Շանթ

21 Ո՞վ է հետևյալ տեսակետի հեղինակը.

Փիլիսոփայությունը պետք է «ազնվացնի և գեղեցկացնի մարդկային հոգին և փոխադրի նրան նյութական ու մառախլապատ կյանքից դեպի աստվածայինը և աննյութականը»:

1) Անանիա Շիրակացի
2) Դավիթ Անհաղթ
3) Եզնիկ Կողբացի
4) Վահրամ Ռաբունի

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 22-24-րդ հարցերին.

XIII-XIV դարերում ուսումնական մշակութային կյանքի նշանավոր կենտրոններից մեկն էր Գլաձորի վանքի համալսարանը: Նրա հիմնադրման թվականը ստույգ հայտնի չէ, բայց հավանական է, որ այն հիմնադրվել է 1280-ական թվականներին …. հայտնի ուսուցչապետի ջանքերով: Գլաձորի համալսարանը միջնադարում հայտնի է եղել որպես «….», «մայրաքաղաք իմաստունների» և այլն: Գլաձորի համալսարանում են ստեղծագործել բազմաթիվ գրիչներ և մանրանկարիչներ:

22 Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

1) Լեո
2) Նորայր արքեպիսկոպոս Պողարյան
3) Կյուրեղ Քիպարյան
4) Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան

23 Ըստ հեղինակի՝ ի՞նչ անունով է հայտնի եղել Գլաձորի համալսարանը միջնադարում.

1) «Երկրորդ Աթենք»
2) «Մեծ հայրապետանոց»
3) «Հայոց Ալեքսանդրիա»
4) «Աղբյուր շնորհաբաշխության տանն Սիսական»

24 **Ո՞ւմ ջանքերով է հիմնադրվել Գլաձորի համալսարանը.**

1) Եսայի Նչեցի
2) Գրիգոր Տաթևացի
3) Հովհաննես Որոտնեցի
4) Ներսես Մշեցի

25 **Հայ եկեղեցական մատենագրության վերաբերյալ ստորև տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ.**

ա. Ճառերի կամ քարոզների նպատակը Աստվածաշնչի և քրիստոնեական սկզբունքների բացատրությունն է, սրանք ի տարբերություն մեկնությունների որպես ուսումնասիրություններ շարադրվում, գրառվում և օգտագործվում էին ուսումնագիտական կենտրոններում:
բ. Վկայաբանությունները բովանդակության պարզության շնորհիվ մատչելի էին շատերին և ընթերցվում էին սրբերի ու նահատակների տոներին նվիրված եկեղեցական արարողությունների ժամանակ:
գ. Այն սրբախոսությունը, որի մեջ քրիստոնյան, խոստովանելով ու վկայելով իր հավատը, նահատակվում է հակառակորդների կամ թշնամիների կողմից, կոչվում է վարք:
դ. Քարոզգրքերը պարունակում են արարողական հրահանգներ և նպատակ ունեն օրինակարգել Աստծո նկատմամբ մարդու կենդանի հարաբերությունն ու պաշտամունքը:
ե. Հակաճառական երկերի նպատակը Հայոց եկեղեցու և հայ ազգի զերծ պահումն է՝ Ընդհանրական եկեղեցու ճշմարիտ դավանանքից հեռացած ու շեղված հոսանքների ազդեցությունից, աղանդավորական գաղափարախոսությունից:
զ. Ջատագովական գրականության նպատակն էր ցույց տալ Հայոց եկեղեցու և քրիստոնեական դավանանքի ճշմարտացիությունը, ինչպես նաև՝ Հայոց եկեղեցին պաշտպանել ոչ քրիստոնեական տարաբնույթ հարձակումներից:
է. Կցուրդները ստեղծվում էին ծիսական երկերի նմանությամբ և որպես հարասություն (պարզաբանում) կցվում էին Պատարագամատույցին, Ժամագրքին, Մաշտոցին, Տոնացույցին:

1) ա, ե, է
2) բ, դ, է
3) բ, ե, զ
4) գ, դ, զ

26 **Թվարկվածներից որո՞նք Օրթոդոքս եկեղեցու հոգևոր առաջնորդների կրած տիտղոսներից չեն.**

ա. աբեղա գ. վարդապետ ե. եպիսկոպոս է. կարդինալ
բ. պապ դ. մետրոպոլիտ զ. պատրիարք

1) ա, բ, գ, ե, է
2) բ, գ, ե, զ, է,
3) ա, գ, դ, ե, զ
4) բ, դ, ե. զ. է

27 **Ընտրել տերմինների ճիշտ բացատրությունները.**

ա. Հռոմկլայի հայոց կաթողիկոսների որդեգրած տիտղոսը կոչվում էր «Ամենայն Հայոց կաթողիկոս»։
բ. Քրիստոնեական եկեղեցիների և նվիրապետական աթոռների առանձնացման համար սկսված շարժումը կոչվում է «միջեկեղեցական շարժում»։
գ. Տվյալ կրոնը դավանող անձանց կողմից այլ դավանանքի հետևորդների հանդեպ անհանդուրժողականության և հալածանքների դրսևորումները կոչվում են «հոգևորսություն»։
դ. Բնակավայրերից դուրս, հյուղակներում կամ խրճիթներում նշվող տոները կոչվում էին «տաղավար տոներ»։
ե. Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունն իր կատարելության համար անվանել են «Թարգմանությունների թագուհի»։
զ. Այն խորհուրդը, որի ընթացքում հոգևորականը ավետման միջոցով աղոթք է կարդում հիվանդներին՝ Աստծո օգնությամբ ապաքինվելու համար, կոչվում է Հիվանդաց կարգ։
է. Ցարիզմի օրոք Աղվանից կաթողիկոսությունը դարձավ Գանձասարի կաթողիկոսություն, ապա՝ եպիսկոպոսական թեմ։
ը. Հոգևորականի զգեստի սրածայր մասը, որը կրել են գլխին, կոչվել է վեղար։

1) բ, դ, զ, է
2) ա, դ, ե, ը
3) բ, ե, է, ը
4) ա, գ, զ, ը

28 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները**

ա. Հանուն Քրիստոսի չարչարանքների ենթարկված, սուրբ հավատը խոստովանողը կոչվում է Խոստովանող:
բ. Եկեղեցու և նրա կարգի դեմ վերահսկողության սահմանումը, աշխարհիկ իշխանությունների միջամտությունը կոչվում է բանադրանք:
գ. Վկաների նահատակման, թաղման կամ մասունքների վրա կառուցված շինությունը կոչվում է վկայարան:
դ. Կիլիկյան Հայաստանի Արտազ գավառում միջնադարում ստեղծված իմաստունների միաբանությունը, որտեղ գործում էր համալսարանը, կոչվում էր «Մայրաքաղաք իմաստունների»:
ե. Արևելահայ մելիքների և բարձրաստիճան հոգևորականների գաղտնի այն ժողովը, որը Հայաստանի ազատագրության հարցով կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկել Վենետիկ և Հռոմ, անվանել են «Տերանց Հայոց»:
զ. Ս. Վրթանեսին, ով հանդես էր գալիս նախարարական տները հաշտեցնելու առաքելությամբ և հանդիմանում էր քրիստոնյային ոչ վայել կյանքով ապրող նախարարներին, անվանել են «Հոգևոր սուր»:
է. Ըստ ավանդության՝ մկրտության ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորիչը Ս. Տրդատ արքային վերանվանել է Հովհաննես՝ ի պատիվ Ս. Հովհաննես Մկրտչի:
ը. Ս. Սահակ Պարթևին տրվել է տիտղոս, որը կոչվում էր «Սրտերի լուսավորիչ»:

1) դ, ե, զ, է
2) բ, դ, զ, ը
3) բ, գ, զ, է
4) ա, գ, դ, ը

29 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցին վերաբացել է Զմյուռնիայի Սկյուտարի հայոց ճեմարանը:
բ. Բոլշևիկյան իշխանությունները 1937 թ. քանդում ու ոչնչացնում են մշակութային մեծ արժեք ներկայացնող V դարի կառույց Երևանի Ս. Ստեփանոսի վանքը:
գ. Խորեն Մուրադբեկյանի նախաձեռնությամբ սփյուռքում մեծ շուքով տոնվել է Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը:
դ. Չնայած Լևոն II-ը միացրեց Անտիոքը, սակայն Հայոց կաթողիկոսության և Անտիոքի կաթոլիկ պատրիարքության պայքարը շարունակվեց մինչև XIII դարի կեսերը:
ե. Խաչիկ Ա-ն նորոգել է Արգինայի կաթողիկոսարանը, Նարեկավանքի դպրոցը, հիմնել թեմեր Հայաստանից դուրս՝ Սիսում, Լամբրոնում:
զ. Գրիգոր Տաթևացին՝ Հովհաննես Որոտնեցու աշակերտը, Երզնկայում ձեռնադրվել է քահանա, իսկ Ապրակունիքի վանքում՝ վարդապետ:
է. Կիրակոս Ա Վիրապեցու ջանքերով Թովմա Մեծոփեցին դպրոց հիմնեց Վաղարշապատում:
ը. 1446 թ. Սսում հրավիրվում է եկեղեցական ժողով, որը կաթողիկոս է հռչակում Թոխաթի (Եվդոկիա) հայոց հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ Եվդոկացուն:
թ. Նադիրի թագադրության արարողության ժամանակ Հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացին նրա մեջքին կապել է շահական իշխանության խորհրդանիշ սուրը. Պարսկաստանի պատմության մեջ սա երկրորդ դեպքն էր, երբ նման իրավունք էր վերապահվել քրիստոնյա հոգևորականին:

1) ա, դ, զ, ը
2) ա, դ, է, թ
3) գ, դ, է, ը
4) բ, գ, ե, թ

30 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Զարգացած միջնադարի վերջին շրջանում ավարտվում է եկեղեցական ճարտարապետության հայկական դպրոցի ձևավորումը։
բ. Միջնադարի քարագործ վարպետներից միայն երկուսին՝ Պողոսին և Մոմիկին է հաջողվել ստեղծել «ասեղնագործ» եռաշերտ խաչքարեր։
գ. Խաչքարային արվեստը զուտ հայկական է և պատկանում է միայն հայ ժողովրդին։
դ. Հայ մանրանկարչության առայժմ հայտնի հնագույն նմուշները 898 թ. «Էջմիածնի Ավետարանի» վերջում կցված երեք մանրանկարներն են։
ե. Վանական դպրոցների սաները ուսումնառության շրջանում սովորում էին գեղագրություն, ծանոթանում մագաղաթ, թանաքներ ու ներկեր պատրաստելու հնարքներին։
զ. Հայ հոգևոր և աշխարհիկ երաժշտական մշակույթը բյուրեղացել և համամարդկային արժեք է ստացել Կոմիտաս վարդապետի շնորհիվ։
է. XIX դարի հայ պատմագրության ամենաականավոր դեմքը Միքայել Չամչյանն է։

1) ա, դ, է
2) բ, գ, ե
3) գ, դ, զ
4) ա, բ, է

31 **Գտնել սխալ պնդումները.**

ա) Հոգեհանգստյան արարողության վերջում՝ «Քրիստոս որդի Աստուծոյ» աղոթքի ընթացքում, հիշատակվում են ննջեցյալների անունները:
բ) Ս. Սահակ Պարթև կաթողիկոսի կողմից սահմանված կանոններով եկեղեցու հատակագիծը գծվել է գետնին, 12 առաքյալներին խորհրդանշող 12 քարերով նշվել են եկեղեցու անկյունները, աբսիդը, մույթերը, մուտքերը և քարերն օծելուց հետո սկսվել է շինարարությունը:
գ) Պասկի խորհրդի ժամանակ նորապսակների գլխին դրվող թագերը խորհրդանշում են, որ նրանք համատեղ ամբողջ կյանքի ընթացքում պետք է պահպանեն հավատարմությունը պսակադրության ուխտին:
դ) Առավոտյան ժամերգության ընթացքում հոգևոր դասը խաչով, խաչվառով և Ավետարանով, նախ օրհնում է Արևելքը և այնտեղ գտնվող Հայոց հայրապետությունը, հանուն Սուրբ Երրորդության, այնուհետև՝ օրհնում և առ Աստված խնդրանք է ներկայացնում աշխարհի մյուս կողմերի համար:
ե) Ձեռնադրության խորհուրդը միշտ կատարվում է պատարագի ընթացքում:
զ) Հայոց եկեղեցում կա նվիրապետական 9 աստիճան, որոնցից վարդապետության աստիճանը որպես գիտական աստիճան շնորհվում է բոլոր քահանաներին:
է) Եկեղեցում ատյանի հյուսիսային կողմում գտնվում է մկրտության ավազանը, իսկ արևելյան կողմում՝ բեմը կամ խորանը:
ը) Արթիկի թեմի առաջնորդանիստը Արթիկի Սուրբ Աստվածածին եկեղեցին է:

1) բ, ե, զ, է
2) ա, գ, ե, ը
3) բ, դ, զ, ը
4) գ, դ, զ, է

32 **Արևելյան Հայաստանի բազմաթիվ վարդապետներ ո՞ր վանքերի վանահայրերի գլխավորությամբ ըմբոստացան 1203 թ. Սսի եկեղեցական ժողովի որոշումների դեմ և հրաժարվեցին ընդունել դրանք.**

ա. Սանահին	գ. Գեղարդավանք	ե. Գոշավանք	է. Հաղպատ
բ. Հաղարծին	դ. Նորավանք	զ. Տաթև	

1) դ, զ
2) բ, ե
3) գ, զ
4) ա, է

33 **Թվարկվածներից որո՞նք չեն հանդիսացել կաթողիկոսական աթոռը Սսից Հայաստան տեղափոխելու պատճառներ.**

ա) Հայոց թագավորության անկումից հետո կաթոլիկ եկեղեցին սաստկացրել էր հայերի դավանափոխ լինելու և Հռոմի պապի գերագահությունը ընդունելու պարտադրանքները:

բ) Մահմեդական տիրակալները սկսել էին միջամտել Հայոց եկեղեցու ներքին գործերին, որի հետևանքով բազմաթիվ կաթողիկոսներ զոհ գնացին նրանց կամայականություններին և չարաշահումներին:

գ) Հայաստանում և շրջակա երկրներում իր տիրապետությունը հաստատած թուրքմեն գահակալ Ջահանշահը խոստացել էր հարկատվությունից ազատել կաթողիկոսական աթոռը:

դ) Կաթողիկոսական աթոռը դադարել էր ամբողջ հայության համազգային-եկեղեցական շահերն արտահայտող կառույց լինելու իր առաքելությունից և դարձել էր իշխող մահմեդականների շահատակությունների, զեղծումների և անմիաբանության արտահայտիչ:

ե) Կիլիկիայում իրենց տիրապետությունը հաստատած մահմեդական տիրակալները ծանր հարկատվության էին ենթարկել կաթողիկոսական աթոռը:

զ) Ուժեղացել էին ներքին երկպառակությունները, բազմաթիվ խմբավորումներ տարբեր խարդավանքների միջոցով պայքարում էին կաթողիկոսական աթոռին տիրանալու համար:

է) Անտիոքի կաթոլիկ պատրիարքները տիրացել էին Սսի կաթողիկոսարանին:

ը) Հայ-բյուզանդական եկեղեցական միության համար Բյուզանդիան ոչ միայն Հայոց եկեղեցուն պարտադրում էր ընդունել Քրիստոսի երկու բնության վարդապետությունը, այլ նաև պարտադրում էր, որ Հայոց կաթողիկոսներն ընտրվեին Բյուզանդիայի կայսեր կողմից:

1) բ, գ, զ, է
2) դ, ե, զ, ը
3) ա, բ, ե, է
4) ա, գ, է, ը

34 **Տրված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. 1991 թ. հունիսի 17-ին ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած օրենքով պետությունը չէր միջամտելու ազգային եկեղեցուն ազատ քարոզելու, իր դավանանքը տարածելուն:

բ. 1930-ական թվականներին Հայոց եկեղեցու նկատմամբ ճնշումներն ու բռնությունները մեղմացան:

գ. Հայաստանի անկախացման հետևանքով հայ կաթոլիկ եկեղեցու առաջնորդարանը հաստատվեց Աշոցքում:

դ. Վազգեն Ա-ի քաղաքականության հետևանքով զինված ուժերում Հայոց բանակի մարտիկների համար ստեղծվեց հոգևոր ծառայություն:

ե. Խորհրդային վարչակարգի առաջին հրովարտակների արդյունքում ստեղծվեց իշխանություն-եկեղեցի հարաբերությունները կարգավորող Եկեղեցական գործերի խորհուրդ:

զ. 1935 թ. Հայաստան են գալիս Գ. Մալենկովը և Ա. Միկոյանը. նպատակն էր՝ Մայր Աթոռը զրկել գոյության միջոցներից և հաշվեհարդար տեսնել հայոց կաթողիկոսի հետ:

է. 1920 թ. կազմված ժամանակավոր «դաշնագրի» արդյունքում կարգավորվեց Մայր Աթոռի լիազոր ներկայացուցիչ ունենալը ՀՀ կառավարությունում:

1) բ, դ, զ
2) ա, ե, է
3) ա, գ, է
4) բ, դ, ե

35 **Թվարկվածներից որո՞նք են Արևելյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո Հայոց եկեղեցու և ցարական կառավարության փոխհարաբերությունների կարգավորման հետևանք.**

ա. Սյունիքի մետրոպոլիտությունը վերացվում է և նրա փոխարեն ստեղծվում է կաթողիկոսություն:
բ. Պարսկական և թուրքական իշխանությունները իրենք էին հատուկ հրամանագրերով հաստատում նորընտիր Հայոց կաթողիկոսներին և խափանում միջամտությունները:
գ. Կ.Պոլսի և թեմերի եկեղեցիներում չէր հիշատակվում կաթողիկոսի անունը որպես Ամենայն Հայոց գահակալի:
դ. Կանոնադրության մեջ մտցվում է եկեղեցական արարողությունների ժամանակ ցարի անվան հիշատակությունը:
ե. Աջապահյանները վերջ են տալիս աթոռակալական կռիվներին ու դժգոհություններին, վարելով հակակաթոլիկ քաղաքականություն՝ պահպանում հայոց ավանդույթները:
զ. Մայր Աթոռը ճանաչվում է որպես աշխարհի ցրված հայության հոգևոր կենտրոն:
է. Պահպանվում էին Հայոց կաթողիկոսի իրավունքները ամբողջ հայության նկատմամբ ռուսական կառավարության հսկողության ներքո:

1) գ, դ, ե
2) ա, զ, է
3) բ, ե, զ
4) դ, զ, է

36 **Քրիստոնեության ամրապնդման և հոգևոր կյանքի վերափոխման նպատակով ի՞նչ որոշումներ ընդունվեցին Աշտիշատի ժողովում.**

ա) Արիոսի ուսմունքը մեկ անգամ ևս դատապարտելու և մերժելու նպատակով հաստատել Նիկեայի տիեզերական ժողովի որոշումները:
բ) Ճանապարհորդների և օտարականների համար հիմնել իջևանատներ և օթևաններ:
գ) Ճգնավորական կամ անապատական շարժումը հովանավորել, ճգնավորների համար հիմնել վանքեր և կուսանոցներ:
դ) Եկեղեցին կրթված հոգևորականներով համալրելու նպատակով եկեղեցիներին ու վանքերին կից բացել դպրոցներ:
ե) Ամուսնություններն ամրապնդելու և ամուսնալուծություններն արգելելու նպատակով սահմանել 20 կանոններ:
զ) Հարբեցողությունը, գողությունը և այլ հանցանքները արմատախիլ անելու համար սահմանել պատիժներ:
է) Իրենց ենթակաների ու ծառաների հանդեպ գթասիրտ լինելու համար բացել դպրոցներ, որոնց ծախսերը հոգալու էր արքունիքը:
ը) Բարեգործական հաստատությունների ծախսերը հոգալու համար կաթողիկոսին կից ստեղծել հոգևոր խորհուրդ:

1) բ, գ, դ, զ
2) ա, բ, զ, ը
3) ա, դ, ե, է
4) գ, ե, է, ը

37 **Հայ հոգևոր գործիչների ստեղծագործությունները դասավորել ըստ դրանց ստեղծման ժամանակագրական հաջորդականության.**

ա) «Եղծ աղանդոց»
բ) «Մատյան ողբերգության»
գ) «Իմաստասիրության սահմանումները»
դ) «Բարի մարդ և բարի քրիստոնյա»
ե) «Ընդդեմ պավլիկյանների»
զ) «Ազգապատում»
է) «Սուրբ Կաթողիկեի ողբը»
ը) «Հաճախապատում»
թ) «Գիրք հարցմանց»

1) ը, զ, գ, ա, ե, բ, թ, է, դ
2) զ, գ, ա, ը, բ, ե, դ, է, թ
3) ը, ա, գ, ե, բ, է, թ, դ, զ
4) ա, ը, գ, բ, ե, թ, է, զ, դ

38 **Կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա) Եփրեմ Ա Զորագեղցի
բ) Աղեքսանդր Ա Ջուղայեցի
գ) Նահապետ Ա Եդեսացի
դ) Կարապետ Բ Ուլնեցի
ե) Ներսես Ե Աշտարակեցի
զ) Աբրահամ Գ Կրետացի
է) Սիմեոն Ա Երևանցի
ը) Հովհաննես Ը Կարբեցի
թ) Ղուկաս Ա Կարնեցի

1) դ, գ, զ, թ, բ, է, ա, ը, ե
2) բ, գ, զ, դ, է, թ, ե, ը, ա
3) բ, գ, դ, զ, է, ա, ը, թ, ե
4) գ, բ, դ, զ, է, թ, ա, ը, ե

39 **Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռանիստ վայրերի անունները դասավորել ըստ դրանց աթոռանիստ դառնալու հաջորդականության.**

ա) Աղթամար
բ) Դվին
գ) Ծովք (Ծոփք)
դ) Շուղրի Կարմիր վանք
ե) Սիս
զ) Հռոմկլա
է) Անի
ը) Արգինա
թ) Կարս

1) գ, բ, ա, թ, ը, է, դ, ե, զ
2) բ, թ, ա, ը, է, գ, դ, զ, ե
3) բ, ա, թ, ը, է, դ, գ, զ, ե
4) ա, բ, ը, թ, է, գ, զ, ե, դ

40 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

ա. Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի վերընտրվելը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ատենապետ
բ. Գարեգին Ա-ի երկրորդ հանդիպումը Հռոմի պապի հետ
գ. Մխիթարյան միացյալ միաբանության մասին պատմական որոշման ընդունումը
դ. Խորեն Ա Մուրադբեկյանի եղերական վախճանը
ե. Օշականում Մ. Մաշտոցի անվան դպրատան կառուցումը
զ. Գևորգ Չորեքչյանի ընտրվելը Ամենայն Հայոց կաթողիկոս
է. Խորհրդային Հայաստանի կառավարությանը կից Եկեղեցու գործերի խորհրդի ստեղծումը
ը. Հայոց եկեղեցու՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ դառնալը
թ. Ա. Մանթաշյանի նվիրատվությամբ կառուցված նոր վեհարանի շենքի վերադարձը Մայր Աթոռին

1) է
2) ը
3) ե
4) թ

41 **Ընտրել հայկական խորհրդանիշներին վերաբերող ճիշտ բացատրությունները.**

1) Խաչը օգտագործվել է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում և խորհրդանշել է աշխարհի նյութականության երկու տարրերը:
2) Մկրտության ավազանը խորհրդանշում է չորս կարգի իրողություն:
3) Ուրարը խորհրդանշում է աշխարհի համար մեռած լինելը, այն օգտագործում էին ճգնակյաց անապատականները:
4) Ազգի ձևավորման ընթացքում ստեղծվում են տվյալ ազգի խորհրդանիշները, որոնց միջոցով այդ ազգը նույնանում է մյուս ազգերին:
5) Խորհրդանիշներն ըստ բնույթի լինում են բարոյակերպարային, պատմական, աշխարհագրական և ազգային-պետական:
6) Հայկական լեռնաշխարհում ութաթև կեռխաչեր, որոնք հին հայերի համար հավերժության խորհրդանիշ են եղել, առաջին անգամ ստեղծվել են հելլենիզմի շրջանում:
7) Կեռխաչը սանսկրիտերենից թարգմանաբար նշանակում է լավ լինել:

42 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Արդարությունն, ըստ սոփեստների, բարոյական առաքինություններից ամենակատարյալն է:
2) Դետերմինիզմի համաձայն՝ մարդը կամքի ազատություն չունի, յուրաքանչյուր արարք նա կատարում է արտաքին ազդակների ճնշման տակ:
3) Հեդոնիզմի համաձայն՝ կյանքի իմաստը հաճույքների և վայելքների մեջ է:
4) Կոսմոպոլիտիզմի համաձայն՝ մարդը բացարձակ ազատ է, ինքն է ընտրում իր ճանապարհը և կարող է անել, ինչ կամենա:
5) Նիհիլիզմի համաձայն՝ բարոյական հատկանիշներն ու առաքինությունները աստվածային պարգևներ են:
6) Էվդեմոնիզմը որպես մարդու բարոյականության հիմք ընդունում է երջանկության (հաճույքի, բավարարվածության) ձգտումը:
7) Ինդետերմինիզմի համաձայն՝ այն, ինչն օգտակար է մարդուն անձնապես՝ բարի և արդար է, իսկ ինչը վնասակար է, ընդհակառակը՝ չար է և անարդար:

43 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշում մանրանկարչության խորհրդաբանությունը.**

1) Մանրանկարչության մեջ կարևոր դեր էին կատարում գույները, որոնց աշխարհիկ գիտնականները համարում էին երկրային խորհուրդների արտահայտություն:
2) Կանաչ գույնը ցույց է տալիս սրբերի ճգնակեցությունը, նրանց մաքրությունն ու անարատ կյանքը:
3) Սև գույնը ցույց է տալիս աստվածային անհասանելի բնությունը:
4) Կարմիր գույնը նշանակում է հանուն մարդու փրկության Քրիստոսի թափած արյունը:
5) Կապույտ գույնը ցույց է տալիս Ադամի աստվածային էությունը:
6) Սպիտակ գույնը ցույց է տալիս սրբերի ճգնակեցությունը, նրանց մաքրությունն ու անարատ կյանքը:
7) Դեղին գույնը ցույց է տալիս աստվածային անհասանելի բնությունը:

44 **Թվարկվածներից որո՞նք չեն բնորոշում քրիստոնեական բարոյականության երեք հիմնական դրսևորումները՝ հույսը, հավատը և սերը.**

1) Քրիստոնեական իմաստով հավատի հիմքը Աստծո և մարդու միջև առկա խորհրդավոր կապի գիտակցումն ու զգացումն է:
2) Կրոնական իմաստով սերը «ցանկալիի ու սպասելիի», այն է՝ աշխարհի արարչության և մարդու փրկության իրականանալիության համոզումն ու վստահությունն է:
3) Քրիստոնեական իմաստով հույսի աղբյուրը, առարկան և նպատակը Աստված է:
4) Կրոնական իմաստով հավատը խարսխված է այն համոզմունքի վրա, թե Աստված մարդկային գիտակցությունից անկախ գոյություն ունեցող բացարձակ ճշմարտություն է:
5) Ի տարբերություն կենցաղային և աշխարհիկ սիրո, քրիստոնեական սերը իրական և շոշափելի է, քանի որ «Սերը երբեք չի ամաչեցնում»:
6) Քրիստոնեական իմաստով հույսի հիմքը հավատն է առ Աստված:
7) Քրիստոնեական իմաստով նյութական աշխարհի գոյության վերաբերյալ մեր համոզումը խարսխված է հավատի վրա:

45 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Հին Հունաստանում նշանավոր էին Զևսի և Ապոլլոն տաճարների գուշակները:
2) Հելլենիստական մշակույթը տարածվել է միայն այն երկրներում, որտեղ իշխում էին ծագումով հույն արքաները:
3) Ի տարբերություն հին հույների՝ հին հռոմեացիները միաստվածային կրոնի հետևորդներ էին:
4) Քրիստոնյաների հալածանքները Հռոմեական կայսրությունում հատկապես սաստկացան երրորդ դարում. քրիստոնեական համայնքների մի մասը ոչնչացվեց, իսկ նրանց ունեցվածքը պետականացվեց:
5) Հեթանոս հայերի պատկերացմամբ՝ աշխարհը բաղկացած էր երեք մասից՝ Երկինք, Երկիր և Անդրշիրիմյան աշխարհ:
6) Արա Գեղեցիկի կերպարանքով հանդես է գալիս աշխարհի շատ ժողովուրդների մեջ տարածված մեռնող և հարություն առնող աստծու պաշտամունքը:
7) Ըստ հին պարսկական կրոնի՝ աշխարհն ստեղծել էր զրադաշտական դիցարանի գերագույն աստված Ահրիմանը:

46 **Հայոց եկեղեցու տոների վերաբերյալ բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Տյառնընդառաջը Հայոց եկեղեցու հինգ տաղավար տոներից է, այն տոնվում է փետրվարի 14-ին:
2) Վարագա Սուրբ Խաչի տոնը նվիրված է Քրիստոսի խաչափայտի մասունքի հայտնաբերման հիշատակին և Հայոց եկեղեցում այն տոնվում է հոկտեմբերի 23-29-ի միջև ընկած կիրակի օրը:
3) Խաչվերացի տոնին, երեկոյան ժամերգությունից հետո, ռեհանով զարդարված խաչը հոգևորականները ժողովրդի ուղեկցությամբ դուրս են հանում բակ, պտտեցնում եկեղեցու շուրջը՝ օրհնելով աշխարհի չորս կողմերը:
4) Ծաղկազարդի տոնին, ամուսնանալուց հետո առաջին անգամ, նորահարսները գնում էին իրենց հայրական տուն՝ հարազատներին այցելության:
5) Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին նվիրված տոնը կոչվում է Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի տոն:
6) Վարդանանց տոնը շարժական է, այն տոնվում է հունվարի 29-ից մինչև մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում:
7) Պայծառակերպության տոնը Հայոց եկեղեցու շարժական տոներից է, այն տոնվում է օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը:

47 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Ազգային լեզվով գրականության ստեղծումը թուլացրեց օտար մշակույթների ազդեցությունը և նպաստեց հայոց մշակույթի զարգացմանը:
2) Հայաստանում Ս. Բարդուղիմեոս առաքյալի քարոզչության հիմնական վայրը Սյունյաց նահանգն էր:
3) Ս. Թադեոս առաքյալը հատկապես լայն գործունեություն է ծավալել Արտազ գավառում, որտեղ Հայոց արքա Աբգարի ամառային նստավայրն էր:
4) Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը Մեծ Հայքում հաստատել է 56 եպիսկոպոսական աթոռ:
5) Կոստանդնուպոլսում հրավիրված Երկրորդ տիեզերական ժողովը սահմանել է «Մի աստվածություն, երեք անձինք» բանաձևը:
6) Ս. Գրիգոր Լուսավորչին հայտնի ներբող է ձոնել Ընդհանրական եկեղեցու հայրերից Հովհան Ոսկեբերանը:
7) Հայոց եկեղեցին ընդունում է միայն առաջին երկու տիեզերական ժողովների որոշումներն ու կանոնները:

48 **Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.**

1) Աղվանից կաթողիկոսությունը ընդունել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու գերագահությունը, իսկ կաթողիկոսները ձեռնադրվել են Ամենայն Հայոց հայրապետի կողմից:
2) Աղթամարի կաթողիկոսության իրավասությունները տարածվում էին Վասպուրական և Տարոն նահանգների վրա:
3) Հովակիմ եպիսկոպոսը 1453 թ. նշանակվել է Կ.Պոլսի առաջին հայ պատրիարք:
4) XIV դարի վերջերին Աղվանից կաթողիկոսական աթոռը տեղափոխվել է Խաչենի Գանձասար վանքը:
5) Երուսաղեմի հայոց պատրիարք Սարգիսն ընդունել է Սսի 1307 թ. ժողովի որոշումները:
6) Կիլիկյան կաթողիկոսության նստավայրը 1930 թ-ից մինչ օրս Անթիլիասում է:
7) Երուսաղեմի հայոց պատրիարքությունը հիմնադրվել է 638 թվականին:

49 **Հայոց կաթողիկոսների վերաբերյալ ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսը դիմել է ռուսական կառավարությանը՝ Գանձասարի կաթողիկոսական աթոռը լուծարելու խնդրանքով:
2) Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի հանձնարարությամբ հաստատվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը, սահմանվել են ծխական և թեմական դպրոցների ծրագրերն ու կանոնագրերը:
3) Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսի հորդորանքով Հարություն քահանա Շմավոնյանը Մադրասում սկսել է հրատարակել հայկական առաջին պարբերականը՝ «Ազդարարը»:
4) Մակար Ա Թեղուտեցի կաթողիկոսի հանձնարարությամբ կազմվել և Թիֆլիսում հրատարակվել է Մայր Աթոռի Մատենադարան - ձեռագրատան ձեռագրերի ցուցակը:
5) Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ Էջմիածնում ստեղծված ուսումնական հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկել յուրաքանչյուր գյուղում դպրոց բացելու ուղղությամբ և հրապարակել է հայկական ծխական դպրոցների առաջին ընդհանուր կանոնները:
6) Եփրեմ Ա Զորագեղցի կաթողիկոսի գահակալության տարիներին Նիկոլայ I կայսրը ժամանել է Հայաստան, Էջմիածնում այցելել գանձատուն, դպրոց, տպարան և հայոց կաթողիկոսին նվիրել է վեղարի ադամանդակուռ խաչ:
7) Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի հանձնարարությամբ վերանորոգվել են Ս. Հռիփսիմեի, Խոր Վիրապի, Հաղպատի, Սանահինի, Սևանի վանքերը, հիմնադրվել Ամերիկայի առաջնորդական թեմը:

50 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

1) Մայր Աթոռի բողոքների արդյունքում ցարական կառավարությունը 1835 թ. արգելեց կաթոլիկների քարոզչությունը հայերի շրջանում, որի պատճառով քարոզիչները Շուշիից տեղափոխվեցին Շամախի։
2) Ազգային եկեղեցին մեծ հեղինակություն էր վայելում հայ ժողովրդի բոլոր խավերի մեջ, ուստի ցարական կառավարությունը Կիլիկիան նվաճելու իր քաղաքական ծրագրում կարևոր տեղ էր հատկացնում Հայոց եկեղեցուն։
3) Ներսես Ե Աշտարակեցու ջանքերի արդյունքում վերականգնվել են կանոնավոր հարաբերությունները Մայր Աթոռի և Կ.Պոլսի պատրիարքության միջև։
4) Հայոց եկեղեցու և ժողովրդի պայքարի հետևանքն այն եղավ, որ Նիկոլայ II ցարը չեղարկեց Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թ. օրենքը։
5) Կենցաղային տարրական պայմանների բացակայության, սովի և հիվանդությունների պատճառով միայն 1914 թ. օգոստոսին մահացել են տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականներ։
6) Բալկանյան պատերազմներում Թուրքիայի պարտությունները նպաստեցին Հայկական հարցի արդարացի լուծմանը 1912-1914 թվականներին։
7) Մեծ եղեռնի ժամանակ Օսմանյան կայսրությունում գտնվող 2200 եկեղեցիներից կողոպտվեցին, հրդեհվեցին և ավերվեցին 2150-ը։

51 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր.**

1) Ս. Թադեոսը և Ս. Բարդուղիմեոսը համարվում են Հայոց եկեղեցու հիմնադիրները, այդ պատճառով Հայոց եկեղեցին կոչվում է առաքելական։
2) Սասանյանների գահ բարձրանալուց հետո նախկին դաշնակից Հայաստանը դարձավ Պարսկաստանի գլխավոր հակառակորդներից մեկը, որովհետև Հայաստանում շարունակում էր իշխել Արտաշեսյանների դինաստիան։
3) Արևելյան և հունական մշակույթների միախառնման արդյունքում ձևավորվեց նոր՝ հռոմեական մշակույթը։
4) Հայ-սասանյան հարաբերությունների վատթարացմանը նպաստեց նաև որոշ հայ նախարարների պառակտիչ գործունեությունը։
5) Ս. Տրդատ Մեծի և Ս. Գրիգոր Լուսավորչի ջանքերով քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց հավասարազոր կրոն։
6) Քրիստոնեության ընդունումը նպաստեց հայոց գրերի ստեղծմանը։
7) Հայոց եկեղեցին իր գործունեությամբ նպաստեց հայ-սասանյան դաշնակցային հարաբերությունների ամրապնդմանը։

52 **Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք չեն.**

1) Արշակավան քաղաքի կառուցման պատճառով նախարարների մեծ մասը դուրս էր եկել Հայոց թագավորի դեմ։
2) Երկրի բնակչության խիստ նվազման հանգամանքը հաշվի առնելով՝ Պապ թագավորը փակել է կուսանոցներ, կրճատել վանականների թիվը։
3) Ս. Գրիգոր Լուսավորչի գործունեության շնորհիվ քրիստոնեությունը տարածվեց նաև Վրաստանում, Աղվանքում, Միջագետքում և Ասորիքում։
4) Քաղկեդոնի ժողովի ընդունած երկաբնակ դավանաբանական բանաձևը քրիստոնեական եկեղեցու մեջ ավելի մեծ խռովությունների և գժտությունների պատճառ դարձավ։
5) Անտիոք քաղաքում բնակվող Արիոս երեցի սխալ քարոզների պատճառով IV դարում խախտվեց քրիստոնեական եկեղեցու միասնությունը։
6) Դվինի առաջին եկեղեցական ժողովի որոշման արդյունքում նեստորականները վտարվեցին Հայաստանից։
7) Վրաց եկեղեցին 608 թ. բաժանվեց Արևելյան եկեղեցական ընտանիքից, որի արդյունքում մաս կազմեց օրթոդոքս եկեղեցուն՝ ընդունելով Կ.Պոլսի տիեզերական պատրիարքի առաջնայնությունը։

53 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

1) Դվինի 893 թ. կործանարար երկրաշարժի հետևանքով Գևորգ Գառնեցի կաթողիկոսը ստիպված էր կաթողիկոսարանը տեղափոխել Զվարթնոց։
2) Արշակունյաց թագավորության անկումից երեք դար անց վերականգնվեց հայկական անկախ պետականությունը, որում իր կարևոր ավանդն ուներ նաև Հայոց եկեղեցին։
3) Սմբատ I-ը 909 թ. Հայաստան ներխուժած Յուսուֆ ամիրայի հետ բանակցելու և պատերազմը կանխելու նպատակով նրա մոտ է ուղարկել Հովհաննես Ե Դրասխանակերտցի կաթողիկոսին։
4) Շիրակավանում 855 թ. գումարված ժողովի արդյունքում կաթողիկոս ընտրվեց փորձառու հոգևորական մի անձ, ով սպարապետ Աշոտ Բագրատունու և ժողովականների համոզմամբ կարող էր համախմբել և զորացնել եկեղեցին։
5) Սարգիս Ա կաթողիկոսը կարգալույծ է արել Հարք գավառի եպիսկոպոսին, որովհետև վերջինս հարել էր թոնդրակեցիներին։
6) Արաբական նոր արշավանքի արդյունքում Հայաստանը հայտնվեց ծանր կացության մեջ, այդ պատճառով Հովհաննես Դրասխանակերտցին կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Կարս։
7) Սյունյաց մետրոպոլիտ Հակոբը դարձյալ հրաժարվեց ենթարկվել Հայոց կաթողիկոսին, այդ պատճառով Խաչիկ Արշարունին վերացրեց Տաթևի մետրոպոլիտությունը։

54 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Խրիմյան Հայրիկի նշանակվելը հայկական պատվիրակության նախագահ՝ Բեռլինում հայկական շահերը պաշտպանելու համար
2) Բարդուղիմեոս վարդապետի թրի տակով Զեյթունի թուրքական կայազորի շուրջ 700 զինվորների անցնելը
3) Կենտրոնական պատգամավորական ժողովի բացումը
4) Կաթողիկոսի հատուկ կոնդակով Պողոս Նուբարին լիազոր նշանակելը
5) Խանասորի արշավանքը
6) Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի դառնալը կաթողիկոսական տեղապահ
7) Հայհեղկոմի որոշմամբ դպրոցի անջատվելը եկեղեցուց
8) Գևորգ Ե Սուրենյանցի գահակալման ավարտը

55 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Օսմանյան կայսրության հայ կաթոլիկների դիմումը սուլթանին՝ Հայոց եկեղեցուց անջատվելու և առանձին պատրիարք ու եկեղեցի ունենալու խնդրանքով
2) Նիկոլայ I-ի այցը Էջմիածին
3) Գեն. Պասկևիչի կողմից գաղտնի հանձնաժողովի ստեղծումը՝ Հայոց եկեղեցու և ռուսական կառավարության հարբերությունները կարգավորող կանոնադրություն մշակելու համար
4) Ներսիսյան դպրոցի բացումը Թիֆլիսում
5) Առաջին հայկական բողոքական վարժարանի հիմնումը Կ.Պոլսում
6) Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու հաստատվելը Ամենայն Հայոց կաթողիկոս
7) «Արարատ» հանդեսի հրատարակման սկիզբը
8) Արմաշի դպրեվանքի հիմնումը

56 **Թվարկված իրադարձություններից ո՞ր երկուսն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Մաշտոց Ա Եղիվարդեցու կաթողիկոս ձեռնադրվելը
2) Պետրոս Ա-ի ջրօրհնեքի արարողությունը Տրապիզոն գետակի մոտ
3) Գրիգոր Զ Ապիրատի գահակալման ավարտը
4) Կաթողիկոսական աթոռի տեղափոխվելը Աղթամար
5) Հայրապետական աթոռի տեղափոխվելը Սիս
6) Ադանայի ժողովի կողմից Սսի ժողովի որոշումների վերահաստատումը
7) Հովհաննես Հերմոնեցու դառնալը Տաթևի դպրոցի ուսուցչապետ
8) Մեսրոպ Ա Արտազեցու գահակալման սկիզբը
9) Պողոս Ա Սսեցի կաթողիկոսի ազատվելը գերությունից

57 **Թվարկվածներից որո՞նք են ազգերին բնութագրող կարևոր հատկանիշներից.**

1) էթնիկական ընդհանրությունների սկզբնական տեսակ լինելը
2) հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելը
3) ազգային պետականությունը
4) համամարդկային մշակույթի գերակշռումը
5) ընդհանուր հոգեկերտվածքը
6) առնվազն երեքհազարամյա սեփական կենսատարածքի առկայությունը
7) ընդհանուր ծագման մասին պատկերացումը և ինքնանվանումը
8) ազգային ինքնագիտակցությունը

58 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) Հին հույների դիցարանի աստվածներն ապրում էին Հունաստանի Օլիմպոս լեռան վրա, այստեղից էլ առաջացել է Օլիմպիական աստվածներ անվանումը։
2) Հին հնդկական ամենավաղ գրական ստեղծագործությունը կոչվում է «Վեդաներ». վեդա նշանակում է գիտելիք։
3) Զրադաշտը աստված էր, որի առաքելության նպատակն էր սատարել երկրում բարու հաղթանակին։
4) Ապաշխարհության խորհրդով թողություն է տրվում այն մեղքերին, որոնք մարդը գործել է մինչև մկրտվելը։
5) Քրիստոնեական բոլոր եկեղեցիների ներկայացուցիչների ընդհանուր ժողովները կոչվում էին տիեզերական ժողովներ։
6) Եկեղեցի բառը ծագել է ասորերեն էկլեսիա բառից, որը նշանակում է հավատացյալների ամբողջություն։
7) Եկեղեցական արարողությունը, որի ժամանակ կատարվում է դրոշմի խորհուրդը, կոչվում է պատարագ։
8) Ձեռնադրության խորհրդի միջոցով ձեռնադրվողը դառնում է հոգևորական և ստանում հոգևոր աստիճան։

59 **Ընտրել ճիշտ պնդումները.**

1) Ներսես Լամբրոնացին, ով պատվիրակության ղեկավարն էր, վերսկսեց Բյուզանդիայի հետ հարաբերությունները և եկեղեցական երկխոսությունը Լևոն II-ի ժամանակ:
2) Սյունյաց թեմի առաջնորդ Ստեփանոս Օրբելյանը Նորավանքում գումարված բարձրաստիճան հոգևորականների ու իշխանների համատեղ ժողովում ընդունել է եկեղեցիների միավորման գաղափարը:
3) Կաթոլիկ Ֆրանցիսկյան միաբանությանը հարած Հեթում II-ը, մի խումբ համախոհ հոգևորականների հետ, 1307 թ. Սսի ժողովում որոշել է ընդունել Քաղկեդոնի դավանանքը:
4) Տարաձայնություններին վերջ տալու համար Օշին թագավորը և Կոստանդին Գ-ն մի քանի համախոհների հետ Ադանայում նոր ժողով են գումարել:
5) Հայաստանի եպիսկոպոսների և վարդապետների գերակշռող մասը, ովքեր համախմբվել էին Գլաձորի համալսարանի շուրջ, հրաժարվեցին ընդունել միայն Սսի 1307 թ. ժողովի որոշումները:
6) Երկրում աճում էր դժգոհությունը պապականությունից, և Մեսրոպ Ա Արտազեցի կաթողիկոսը 1371 թ. Սիսում հրավիրեց նոր եկեղեցական ժողով:
7) Ուսուցչապետեր Եսայի Նչեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և նրանց համախոհները կարողացան ստեղծել միարարներին պաշտպանող պայքարի կենտրոններ:
8) Կաթոլիկ ֆրանցիսկյան և դոմինիկյան վանականներին XIV դարի 30-ական թթ. հաջողվում է միաբանություն ստեղծել Քռնայում:

60 **Բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

1) Եզնիկ Կողբացին իր խրատներում պատվիրում է. «Լավ է մաքուր մտքով քնել, քան պիղծ խորհրդով աղոթել և իզուր չարչարվել»:
2) Դավիթ Անհաղթն իր «Իմաստասիրության սահմանումներն» աշխատության մեջ գրում է, որ աղոթքի սրբությունները երեքն են՝ սրտի, լեզվի և ձեռքերի, քանզի աղոթքը նրանց միջոցով է կատարվում:
3) Վարդան Այգեկցին «Գիրք հաստատութեան և արմատ հավատոյ» աշխատության մեջ Աստծո մասին գրում է. «Ինքն ամեն ինչ պարունակում է, ամեն ինչի մեջ է, ամեն ինչից վեր է, ամեն ինչից դուրս է, ամեն ինչ նրանով է և ամեն ինչ նրա փառքի համար է»:
4) Անանիա Շիրակացին գրում է. «Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել և չկա ոչինչ, որ անմատչելի լինի բանականությանը»:
5) Մովսես Խորենացին գրում է. «Մինչև որ ժողովուրդը չվարժվի անձնազոհության, չի ունենա իր ազատությունը, մինչև որ ժողովուրդը չվարժվի իր եսը ենթարկելու համայնքին, չի ունենա իր պետականությունը»:
6) «Գիրք հարցմանց» երկասիրությունում Գրիգոր Տաթևացին, խոսելով զենքի և դրա գործադրման մասին, գրում է, որ զենքը թշնամիներին հալածելու համար է, որ Աստված զինական արվեստի միջոցով մարդուն սովորեցրեց, թե ինչպես թշնամիներից պաշտպանվի:
7) Հովհան Որոտնեցին բացատրում է, որ Աստծո գոյությունը կարելի է հիմնավորել բանականության միջոցով. «հետևանքներից դեպի պատճառը ապացույցների միջոցով»:
8) Մխիթար Գոշն իր «Դատաստանագիրք Հայոց» աշխատության մեջ, շեշտադրելով պետականության պահպանման ու հզորացման անհրաժեշտությունը, գրում է. «Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն Աստծո համար է»:

61 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը չընդունեց՝ հայ-բյուզանդական եկեղեցիների որպես իրավահավասար եկեղեցիների միավորում, գաղափարը:
2) Նարեկավանքը գտնվում է պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի Ռշտունյաց գավառում, Վանա ծովակի ափին, որտեղ ժամանակին ստեղծագործել է հայտնի պատմիչ Ուխտանեսը:
3) Հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունների սկզբնավորումը կապված է Անիի թագավորության անկման հետ:
4) Մխիթար Սեբաստացին որոշում է դիմել կաթոլիկ եկեղեցու օգնությանը, որի տրամադրած միջոցներով հնարավոր կլիներ իրականություն դարձնել իր մեծ երազանքը:
5) Հովհաննես Ա կաթողիկոսի կողմից հրավիրված Դվինի եկեղեցական ժողովը մերժել է նեստորականությունը և նրանց վտարել Հայաստանից:
6) Կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցին (1763-1780) կարողացավ բարձրացնել Մայր Աթոռի հեղինակությունը և հաստատել կաթողիկոսական միանձնյա իշխանություն:
7) Աբգար Դպիրը Հայոց կաթողիկոսի անունից բանակցություններ է վարել Վենետիկի հանրապետության ղեկավարության հետ:
8) Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսը, ով հաջորդել է Աբրահամ Կրետացուն, դիմում է հղել Եկատերինա II-ին՝ առաջարկելով Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական անկախ պետություն ստեղծել:

62 **Գտնել ճիշտ պատասխանները.**
Վազգեն Ա Պալճյան կաթողիկոսի գործունեության արդյունքում՝

1) Հաստատվեց Գերագույն հոգևոր խորհրդի և եպիսկոպոսական ժողովի կողմից ներկայացված «Ներքին թեմերի եկեղեցական կանոնադրությունը»:
2) Օշականում կառուցվեց Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը:
3) ՀՀ-ում հաստատվեցին 8 թեմեր:
4) Հայոց եկեղեցին դարձավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, այնուհետև՝ Եվրոպական եկեղեցիների համաժողովի անդամ:
5) Հայոց բանակի հոգևոր-կրոնական կարիքները բավարարելու նպատակով երկրի զինված ուժերում ստեղծվեց հոգևոր ծառայություն, որը գլխավորում էր ՀՀ զինված ուժերի հոգևոր առաջնորդը:
6) Վերահաստատվեց Հայոց եկեղեցու Արցախի թեմը:
7) Երևանի պետական համալսարանում հիմնվեց Աստվածաբանության ֆակուլտետ:
8) Վերաբացվեց Սևանի դպրանոցը:

63 Գտնել ճիշտ պատասխանները.

Հայոց եկեղեցին թուլացնելու նպատակով խորհրդային իշխանությունը 1920-ական թթ. ի՞նչ քայլեր ձեռնարկեց.

1) 1921 թ. փետրվարին Հայաստանի ժողկոմխորհը որոշում ընդունեց Էջմիածնի վանքից հարկեր գանձելու մասին, ընդ որում՝ եկամտահարկի չափն անցնում էր 120 հազար ռուբլուց, այն դեպքում, երբ վանքի տարեկան եկամուտը 40-50 հազար ռուբլի էր:
2) Հայհեղկոմի որոշմամբ բռնագրավվեցին Մայր աթոռի շենքերը. Ճեմարանի շենքը, մատենադարանը, թանգարանը, տպարանը, Ս.Հռիփսիմեի, Ս.Գայանեի վանքերը:
3) Դադարեց գործել Վրաստանի հայոց թեմը:
4) 1922-1923 թթ. քանդվեցին Երևանի Ս.Կաթողիկե, Ս. Պետրոս-Պողոս, Նորքի Ս. Սիմեոն Ծերունի եկեղեցիները:
5) Հայհեղկոմի որոշմամբ պետականացվեցին Ս. Էջմիածնի վանքի արժեքները:
6) Խորհրդայնացման առաջին տարիների ընթացքում Հայաստանում և ԽՍՀՄ տարածքում փակվել են 20-ից ավելի հայկական եկեղեցիներ և վանքեր:
7) Մայր Աթոռից խլեցին նրա ձեռքում մնացած վանքապատկան հողերը, սակայն կաթողիկոսի ջանքերով դրանք վերադարձվեցին Հայոց եկեղեցուն:
8) 1928 թ. օգոստոսի 4-ին ՀԿ(բ)Կ կենտկոմը որոշեց փակել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

64 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների կամ երևույթների իրական պատճառահետևանքային կապեր.**

1) Հայ միջնադարյան փիլիսոփայության մեջ բնափիլիսոփայական մտքի՝ որպես ուղղության կայացումը կապված է Անանիա Շիրակացու անվան հետ։
2) Հայոց գրերի գյուտը ամենից առաջ պայմանավորված էր Աստվածաշունչը հայերեն թարգմանելու և այն մայրենի լեզվով ուսուցանելու կենսական անհրաժեշտությամբ։
3) VIII-XI դարերում Հայոց եկեղեցուն և ազգային միասնությանը լուրջ վնաս են պատճառել հատկապես պավլիկյանները և ավետարանականները։
4) Հայ փիլիսոփայական միտքը պատմական հայտնի դեպքերի պատճառով XV դ. երկրորդ կեսից մինչև XVII դ. սկիզբը վերելք է ապրել։
5) Գրիգոր Նարեկացին նախորդ դարերի մշակութային հարուստ հենքի վրա կարողացավ հիանալի կերպով ընդհանրացնել ազգային հոգևոր, աշխարհիկ և գուսանական արվեստի լավագույն նվաճումները։
6) X դ. երկրորդ կեսին՝ Հայաստանում թագավորության վերականգնման շրջանում, նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ճարտարապետության, քանդակագործության և գիտության զարգացման համար։
7) Վաղ միջնադարում Հայոց բանակի հետևակային գնդերը մեծ հռչակ էին վայելում, այդ պատճառով Հռոմի, Բյուզանդիայի և Օսմանյան տիրակալները աշխատում էին իրենց զինված ուժերի մեջ ընդգրկել այդ գնդերը։
8) Պատմական տարբեր ժամանակաշրջաններում, նաև մեր օրերում, երբ հայության ազգային ինքնագիտակցությունը տարբեր պատճառներով թուլացել է, օտար մշակութային տարրերն ու մեղեդիները առաջացրել են հայի հոգևոր-ազգային նկարագրի աղճատման վտանգ։

65 **Եկեղեցական ժողովները դասավորել ըստ դրանց գումարման ժամանակագրական հաջորդականության.**

1) Աղվենի եկեղեցական ժողովը
2) Շահապիվանի եկեղեցական ժողովը
3) Եփեսոսում գումարված երրորդ տիեզերական ժողովը
4) Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը
5) Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը
6) Ծամնդավի եկեղեցական ժողովը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Շուղրի Կարմիր վանքում 2500 հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան գործիչների մասնակցությամբ ժողովը
2) Ներսես Դ Շնորհալու գահակալման սկիզբը
3) Աղթամարի կաթողիկոսության հիմնադրումը
4) Խաչիկ Բ Անեցու հռչակվելը Հայոց կաթողիկոս
5) Բարսեղ Ա-ի հաստատվելը Շուղրի Կարմիր վանքում
6) Անիի թագավորության անկումը

67 **Իրադարձությունները կամ երևույթները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Քրիստոնեական առաջին համայնքների առաջացումը Պաղեստինում
2) Մայր Տաճար Ս.Էջմիածնի կառուցումը
3) Բուդդայական կրոնի ստեղծումը
4) Հելլենիզմի մուտքը Հայաստան
5) Հանուն քրիստոնեական հավատի աշխարհում տեղի ունեցած առաջին պատերազմը
6) Ս. Բարդուղիմեոսի և Ս. Ոգուհու մահապատիժը
7) Տրդատ թագավորի ծանոթանալը Գրիգոր Լուսավորչի հետ Կեսարիայում

68 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Հայրենական մեծ պատերազմի ավարտը
2) Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քանդելը խորհրդային իշխանության կողմից
3) Գևորգ Չորեքչյանի կողմից Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրումը, որտեղ չհաջողվեց Ամենայն հայոց կաթողիկոս ընտրել
4) Խորեն Պալճյանի ընտրվելը Ամենայն Հայոց կաթողիկոս
5) Հայկական համաշխարհային կոնգրեսի հրավիրումը Նյու Յորքում
6) «Սասունցի Դավիթ» տանկային առաջին շարասյան ուղարկվելը ռազմաճակատ
7) Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի կողմից 11 կետից բաղկացած զեկուցագրի ներկայացումը Ի. Ստալինին

69 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. Ժամերգություն
Բ. Ճգնավոր
Գ. Անդաստան
Դ. Սկիհ
Ե. Նավակատիք
Զ. Նարոտ
Է. Նշխար

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

1) կարմիր և սպիտակ թելերի հյուսվածք, որն օգտագործվում է Մկրտության խորհրդի ժամանակ
2) աշխարհի չորս ծագերի օրհնության արարողություն
3) եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող ամենօրյա աղոթքի արարողություն
4) հաղորդության ժամանակ օգտագործվող խաչի պատկերով կլոր հաց
5) նորակառույց կամ վերանորոգված եկեղեցու օծման հանդիսավոր արարողություն
6) Պատարագի ժամանակ օգտագործվող արծաթե կամ ոսկե բաժակ
7) եկեղեցական արարողություն, որի ժամանակ կատարվում է Հաղորդության խորհուրդը
8) մենակյաց, աշխարհիկ կյանքից ու վայելքներից հրաժարված մարդ

70 **Տերմինները կամ հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

Ա. Քաղաքական կամ այլ պատճառներով եկեղեցու ներսում ստեղծված ապօրինի կաթողիկոսական աթոռ
Բ. Հունարեն նշանակում է վկա, այսպես են կոչում նրանց, ովքեր նահատակվել են՝ վկայելով իրենց հավատը Քրիստոսի հանդեպ
Գ. Ապաստարան բորոտների համար
Դ. Քրիստոնեական եկեղեցու սկզբնավորման օրվանից պահպանված ու մեզ փոխանցված բանավոր պատմություն
Ե. Յուրաքանչյուր հռոմեացի ուներ իր անձնական հովանավոր ոգին, որը հայտնվում էր իր ծննդյան պահից
Զ. Տրդատը այն ստացել էր Կոստանդիանոս կայսրից, որի վրա կա գրություն՝ «....Կյանքի Արքայի՝ Քրիստոսի խաչին նվիրյալ լինի, որով մեզ փրկեց հավիտենական մահից»։
Է. Ընկերություն, որի նպատակն էր միավորել Հայոց եկեղեցու հետևորդներին և կաթոլիկ հայերին

1) Ուրկանոց
2) Սրբազան ավանդություն
3) Աթոռակից
4) Մարտիրոս
5) «Համազգյաց»
6) Հակաթոռ
7) Գենիուս
8) «Հավլունի»

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է